

## Միփթար Սեբաստացի կրթահամալիր Միջին դպրոց Աշխարհագրության ծրագիր (7,8,9 դասարաններ)

Համապատասխան պետական չափորոշչի միջին դպրոցն ավարտող սովորողը աշխարհագրություն առարկայից պետք է ունենա հետևյալ գիտելիքները, կարողություններն ու հմտությունները.

- ✓ Իմանա որոնք են աշխարհագրական համակարգերը
- ✓ Մարդ – բնություն փոխազդեցությունը
- ✓ Երկրագնդի տարբեր տարածքների առանձնահատկությունները
- ✓ Հայաստանի առանձին հատվածների առանձնահատկությունները, դրանց բնութագիրը
- ✓ Կողմնորոշվի տեղանքում
- ✓ Ունենա նվազագույն քարտեզագրական գիտելիքներ

Աշխարհագրության ուսուցման նպատակը

- ✓ Աշխարհագրական աշխարհահայացքի ձևավորում
- ✓ Սովորողի մեջ աշխարհագրական և քարտեզագրական նվազագույն գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորում

Աշխարհագրություն առարկայի ուսուցման խնդիրները

- ✓ Սովորողին ծանոթացնել տարբեր երկրների բնությանը, բնակչությանը, տարբեր ժողովուրդներին, նրանց մշակույթին
- ✓ Կարողանա ճանաչել իր երկիրը, գնահատի նրա տեղն ու դերը արդի հասարակարգում
- ✓ Կարողանա ստեղծել մեղիաքարտեզներ, տեղայնացնի դրանք, կազմի սխեմաներ ու դիագրամներ
- ✓ Սովորողների մոտ ձևավորել աշխարհագրական մտածելակերպ
- ✓ Զարգացնել տրամաբանելու, համեմատելու, հետազոտելու կարողություններ
- ✓ Կարողանա կատարել ստեղծական աշխատանքներ
- ✓ Ծանոթանալով մեծ թվով աշխարհագրական անունների հետ սովորողի մոտ զարգանում է հիշողությունը
- ✓ Սովորողը կկարողանա նկարագրել, բնութագրել, դիտարկել, օգտվել որոշակի սարքերից, շրջապատում նկատել պարզագույն օրինաչափություններ կատարել եզրահանգումներ
- ✓ Միջին դպրոցը ավարտողը պետք է ճանաչի բնությունը, սիրի այն, գնահատի նրա գեղեցկությունը, նա կպահպանի այն և հոգատարությամբ կվերաբերվի բնությանն ու կենդանական աշխարհին
- ✓ Սովորողը պետք է գիտակցի բնական պաշարների սահմանապակություն, դրան սպառողական վերաբերմունք չցուցաբերի

Ուսումնական միջավայր

- ✓ Կահավորված կաբինետ
- ✓ Բնության գրկում
- ✓ Համակարգիչ, նեթբուկ, նոթբուկ
- ✓ Էլեկտրոնային գրատախտակ
- ✓ Քարտեզներ, գլոբուս

Ուսումնական նյութեր

- ✓ Քարտեզներ
- ✓ Ատլասներ
- ✓ Ուրվագծային քարտեզներ
- ✓ Տեղեկագրքեր
- ✓ Էլեկտրոնային գրադարան

Համացանցի կիրառությունը

- ✓ Դպրոցի կայքը
- ✓ Նախապես ընտրված ուսումնական կայքեր
- ✓ Ուսուցչի, սովորողի բլոգը
- ✓ Սովորողը համացանցում կարող է տեղադրել նաև իր կատարած ուսումնական, ստեղծական և հետազոտական աշխատանքները և տարածել դրանք
- ✓ Օգտվել թարմ աշխարհագրական, աշխարհաքաղաքական նորություններից
- ✓ Կատարել հեռավար ուսուցում

Ուսումնական գործունեության տեսակներ

- ✓ Ուսումնական նյութի բացատրում
- ✓ Ցուցադրում
- ✓ Քարտեզների ուսումնասիրում, կազմում
- ✓ Տեղանքի դիտարկում
- ✓ Ուսումնական ճամփորդությունների կատարում
- ✓ Ֆիլմերի դիտում, քննարկում
- ✓ Քարտեզագրական և գրաֆիկական աշխատանքների կատարում
- ✓ Հինախնդիրների ուսումնասիրում
- ✓ Ստեղծական աշխատանքների կատարում
- ✓ Խնդիրների և վարժությունների լուծում
- ✓ Ուսումնական փաթեթների ստեղծում
- ✓ Փորձերի իրականացում
- ✓ Թեստային աշխատանքների կատարում
- ✓ Մեդիաճամփորդություններ, մեդիաքարտեզների և մեդիադիագրամների կազմում
- ✓ Ուսումնահետազոտական աշխատանքների կատարում
- ✓ Մեդիաօլիմպիադաների և ստուգատեսների մասնակցություն

Սովորողի տնային աշխատանքի կազմակերպում

- ✓ Համապատասխան կայքերի ուսումնասիրում
- ✓ Դաս ցուցադրությունների ստեղծում
- ✓ Դասանյութերի հետազոտում
- ✓ Ուսումնական փաթեթների ստեղծում
- ✓ Էլեկտրոնային դասերի ստեղծում
- ✓ Հեռավար խորհրդատվություն դասավանդողի հետ

Ստուգում և գնահատում

- ✓ Բանավոր հարցում
- ✓ Էլեկտրոնային գրավոր աշխատանքներ
- ✓ Մասնակցություն մեդիաօլիմպիադաներին
- ✓ Մասնակցություն ստուգատեսներին
- ✓ Խմբային աշխատանքների
- ✓ Գործնական աշխատանքներ S2S-ի կիրառմամբ
- ✓ Ամփոփիչ էլեկտրոնային գրավոր աշխատանքներ

Աշխարհագրություն գիտությունը բաժանվում է երկու մասի ֆիզիկական և հասարակական կամ սոցիալտնտեսական:

Միջին դպրոցում սովորողները սկսելու են հասարակական աշխարհագրություն դասընթացը:

Նախատեսվում է սովորողներին ծանոթացնել

Համաաշխարհային տնտեսությանը

Աշխարհի բնակչությանը

Տարածաշրջաններին և պետություններին

Հայկական լեռնաշխարհին

Հայաստանի Հանրապետությանը

AshXarhAgriutyun@at.ua

## Հասարակական աշխարհագրություն

### 7-րդ դասարան

Չաբաթական 1 ժամ - 36 ժամ տարեկան

Մովորողին ներկայացվող պահանջները

7-րդ դասարանում ուսումնասիրվում է հասարակական աշխարհագրություն դասընթացը: Դասընթացի նպատակն է սովորողին տալ ընդհանուր և հիմքային գիտելիքներ աշխարհի քաղաքական կարտեզի ձևավորման, պետությունների դասակարգման, աշխարհի բնակչության, համաշխարհային տնտեսության վերաբերյալ:

«Ա» մակարդակ

Գաղափար ունենա պետությունների դասակարգման սկզբունքներից, իմանա երկրների կառավարման և պետական կառուցվածքի ձևերը, աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման փուլերը, կարողանա քարտեզի վրա ցույց տալ խոշոր պետություններն մայրաքաղաքներով, իմանա բնական ռեսուրսների տեսակները, իմանա դրանց տարածման խոշոր շրջանները:

Իմանա աշխարհի բնակչության ներկայիս թիվը, շարժի տեսակները, միգրացիայ ուղղությունները: Կարողանա նշել աշխարհի խոշորագույն և Հայաստանի հարևան երկրների կրոնական, ռասսայական, լեզվական և ազգային կազմը: Իմանա խոշոր քաղաքային ագլոմերացիաները, կարողանա քարտեզի վրա տարբերակել քաղաքները:

Իմանա ինչ է համաշխարհային տնտեսությունը, ճյուղերը, կարողանա թվարկել կարևորագույնները:

«Բ» մակարդակ

Իմանա հասարակական աշխարհագրություն, քաղաքական քարտեզ հասկացությունները, կարողանա դասակարգել պետությունները ըստ տարածքի մեծության, բնակչության թվի, աշխարհագրական դիրքի, պետական կառուցվածքի և կառավարման ձևի: Կարողանա կազմել պետությունների դասակարգման մեդիասխեմաներ: Իմանա Հայաստանի տեղը պետությունների դասակարգման շարքում: Կարողանա բացատրել պետությունների վարչաքաղաքական բաժանման առանձնահատկությունները, առանձնացման պատճառները: Իմանա ինչ է բնական ռեսուրսը, պայմանը, ռեսուրսաապահովվածությունը: Կարողանա նշել բնական ռեսուրսների տարածման առանձնահատկությունները, դրանց օգտագործումն ու սպառելիությունն ըստ տարածաշրջանների: Տա էկոլոգիական գնահատական աշխարհում ռեսուրսների օգտագործման և դրա հետևանքով առաջացող բացասական հետևանքներին: Հստակ իմանա հետևյալ հասկացությունների բացատրությունները. բնակչություն, բնական աճ, բնական շարժ, միգրացիա, ուրբանիզացիա, ագլոմերացիա, մեգալապոլիս, էթնոս, ռասսա, աշխատանքային ռեսուրս, տնտեսապես ակտիվ բնակչություն, վերարտադրություն և տիպերը, բնակչության խտություն: Կարողանա կազմել մեդիադիագրամներ բնակչության սեռատարիքային կազմի վերաբերյալ, մեդիաքարտեզներ՝ կրոնական, ռասսայական, ազգային կազմի վերաբերյալ: Կարողանա տարբեր կայքերի միջոցով ուսումնասիրել և

վերլուծել Երկրագնդի ներկայիս ժողովրդագրական վիճակը, բնակչության կուտակման հիմնական արեալները, և շարժի հիմնական ուղղությունները, համեմատել Հայաստանի ցուցանիշների հետ: Կարողանա հաշվարկել ժողովրդագրական առանձին ցուցանիշներ: Իմանա ինչ է տնտեսությունը, ազգային տնտեսությունը, համաշխարհային տնտեսությունը: Կարողանա տնտեսական կայքերի, միջազգային բորսայի կայքի ուսումնասիրությամբ վերլուծել աշխարհում տնտեսության ճյուղային կառուցվածքի իրական պատկերը: Ստեղծել Մեդիաքարտեզ դրա վերաբերյալ: Տիրապետի տնտեսությունը բնութագրող շատ կարևոր հասկացությունների, իմանա դրանց բացատրությունը: Կապի միջոցներ, ժամանակակից տրանսպորտային համակարգի տեղաբաշխումը, զարգացած ճյուղերը, համացանաց: «Գ» մակարդակ

Իմանա աշխարհի քաղաքական քարտեզի ժամանակակից փոփոխությունների հիմնական միտումները: Կարողանա տալ առանձին երկրների և տարածաշրջանների քաղաքաաշխարհագրական դիրքի գնահատականը, օգտվելով SՀS միջոցներից վերլուծել քարտեզագրական, տեքստային նյութերը:

Իմանա ռեսուրսների տեղաբաշխման հիմնական օրինաչափությունները, կարողանա կազմել աշխարհում տարբեր երկրներում ռեսուրսների շահագործման վերաբերյալ մեդիաաղյուսակներ, մեդիաքարտեզ, դիագրամներ:

Իմանա աշխարհում բնակչության հիմնական արեալների կուտակման պատճառները, միգրացիաների քաղաքական բովանդակությունը: Կատարել վերլուծական աշխատանք աշխարհի բնակչության տարբեր ցուցանիշներով օգտվելով տարբեր կայքերից, վիճակագրական տվյալներից, ներկայացնել մեդիատարբերակներով: Իմանա ազատ տնտեսական գոտի, ԳՏՀ երկրների զարգացման մակարդակ, գյուղատնտեսության մասնագիտավման ուղղություններ, համաշխարհային տրանսպորտի դերը տնտեսության զարգացման բնագավառում:

Արժեքային համակարգ

Գիտակցի բնական ռեսուրսների սահմանափակությունը

Գիտակցի, որ բնության նկատմամբ սպառողական վերաբերմունքը բումերանգի պես հետ է վերադառնում

Հասկանա, որ բնակչության կրթական մակարդակ, զարգացվածությունը, SՀS գիտելիքների կատարելագործումը տնտեսության զարգացման հիմքն է հանդիսանում

Գիտակցի, որ համաշխարհային տնտեսության զարգացումը ազգային տնտեսությունների զարգացման և համախմբման արդյունք է

Դասընթացի թեմատիկ պլանավորում

1. Ներածություն

2. Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման փուլերը -2ժ

3. Պետությունների դասակարգման սկզբունքները-2ժ

4. Գործնական աշխատանք
5. Աշխարհի բնակչությունը
6. Բնակչության տեղաբաշխումը և միգրացիաները
7. Բնակչության սեռատարիքային կազմը, աշխատանքային ռեսուրսները
8. Բնակչության կրոնական, ազգային, ռասսայական կազմը
9. Տարաբնակեցում
10. Գործնական աշխատանք
11. Թեմատիկ գրավոր աշխատանք
12. Բնական ռեսուրսները, որպես մարդկության զարգացման նախադրյալ
13. Ռեսուրսաապահովվածություն
14. Համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքը
15. Տնտեսության զարգացման գործոնները
16. Արդյունաբերություն
17. Վառելիքաէներգետիկ արդյունաբերություն
18. Մետալուրգիա և մեքենաշինություն
19. Թեթև և սննդի արդյունաբերություն
20. Գյուղատնտեսություն
21. Բուսաբուծություն
22. Անասնապահություն
23. Գործնական աշխատանք
24. Թեմատիկ գրավոր աշխատանք
25. Հաղորդակցության ուղիներ
26. Ոչ նյութական արտադրության ոլորտ-2ժ
27. ՀՀ-ը և աշխարհը

## Տարածաշրջանների աշխարհագրություն

### 8-րդ դասարան

շաբաթական 1 ժամ - 36 ժամ տարեկան

Սովորողին ներկայացվող պահանջները

8-րդ դասարանում սովորողը սկսում է ուսումնասիրել տարածաշրջանների և պետությունների աշխարհագրություն: Այս դասընթացում համակարգվում է 7—րդ դասարանում անցածը և տեղայնացվում կոնկրետ տարածաշրջանի և պետության օրինակով:

8-րդ դասարանը ավարտող սովորողը պետք է

Կարողանա քարտեզի վրա ցույց տալ աշխարհի գրեթե 200 պետություններն իրենց մայրաքաղաքներով

Կարողանա ինքնուրույն կազմել աշխարհի քաղաքական քարտեզը՝ կիրառելով մեդիա համատությունները

Իմանա երկրների զարգացման մակարդակները, տեղը և դերը աշխարհում

□ Տարբերակել ըստ մայրցամաքներ, պետական կարգի, բնակչության, կրոնական կազմի  
□ Կարողանա կազմել մեդիասխեմաներ առանձնացնելով վերը նշված հատկանիշները պետությունների համար

□ Ունենա մեդիափաթեթ (sky drive-ում կամ անձնական բլոգում), որտեղ կլինեն նրա կատարած ուսումնահետազոտական բոլոր աշխատանքները՝

- ✓ Մեդիաքարտեզներ, սխեմաներ, դիագրամներ
- ✓ Թեստային աշխատանքներ
- ✓ Ցուցադրություններ
- ✓ Վերլուծական – համեմատական աշխատանքներ

«Ա» մակարդակ

Իմանա ուսումնասիրվող պետությունները քարտեզի վրա, կարողանա նշել նրա հարևաններին, մայրաքաղաքը, պետական կարգը, տարածքի մեծությունը, տնտեսության առաջատար ճյուղերը: Կարողանա օգտվելով տարածաշրջանի մեդիաքարտեզից նկարագրել նրա աշխարհագրական դիրքը, բնակլիմայական պայմանները:

«Բ» մակարդակ

Կարողանա բնութագրել տարածաշրջանի զարգացման մակարդակը, հեռանկարները, համեմատել պետությունները, օգտվելով ուսումնական և այլ կայքերից կատարել վերլուծություն պետությունների զարգացմաննախադրյալներ ու հեռանկարների վերաբերյալ: Ստեղծել մեդիաքարտեզներ ուսումնասիրվող տարածաշրջանի համար: Իմանա տնտեսության ճյուղային կառուցվածքի առանձնահատկությունները, արտադրվող և արտահանվող ապրանքները, ռեսուրսաապահովվածությունը: Բնակչության կազմը, առանձնահատկությունները:

«Գ» մակարդակ

Կարողանա վերլուծել երկրների քաղաքաաշխարհագրական դիրքի առանձնահատկությունները, արտաքին տնտեսական կապերը, դերը արտաքին առևտրում: Իմանա տարածաշրջանի, երկրի տնտեսության տարածքային կառուցվածքը, աշխատանքային ռեսուրսների քանակը: Երկրի տնտեսության զարգացման մեջ SՏՏ ների կիրառման փորձը, առավելությունները, հեռանկարները:

Դասընթացի թեմատիկ պլանավորումը

1. Հյուսիսային Եվրոպա
2. Մեծ Բրիտանիա
3. Արևմտյան Եվրոպա
4. Ֆրանսիա
5. Գերմանիա
6. Հարավային Եվրոպա
7. Իտալիա
8. Գործնական աշխատանք: Մեդիաքարտեզ և մեդիաաղյուսակ Եվրոպայի երկրները
9. Հվ.Ամ Ասիա
10. Իրան

11. Թուրքիա
12. Վրաստան
13. Ադրբեջան
14. Գործնական աշխատանք
15. Թեմատիկ գրավոր աշխատանք
16. Ալ Ասիա
17. Չինաստան
18. Ճապոնիա
19. Կիսամյակային աշխատանքների ամփոփում
20. Հվ Ասիա
21. Հնդկաստան
22. Հվ.ալ Ասիա
23. Գործնական աշխատանք
24. Թեմատիկ Գրավոր աշխատանք
25. Աֆրիկա
26. Եգիպտոս
27. ՀվԱֆրիյան հանրապետություն
28. Օվկիանիա
29. Ավստրալիա
30. Գործնական աշխատանք
31. Հս Ամերիկա
32. ԱՄՆ
33. Լատինական Ամերիկա
34. Բրազիլիա
35. Գործնական աշխատանք
36. Տարեկան աշխատանքների ամփոփում

## Հայաստանի աշխարհագրություն

### 9-րդ դասարան

շաբաթական 1 ժամ- 36 ժամ տարեկան

Սովորողին ներկայացվող պահանջները

9-րդ դասարանում սկսվում է մի նոր դասընթաց՝ Հայաստանի աշխարհագրություն: Այս դասընթացը ավարտող սովորողի մոտ ձևավորվում է հետևյալ արժեքային համակարգը.

□ Սովորողը պետք է կարևորի Հայկական լեռնաշխարհը որպես հայության բնօրրան և հայ ժողովրդի հայրենիք

□ Հստակ գիտակցի ՀՀ աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները, կարողանա վերլուծել դրա կարևորությունը, առավելություններն ու սահմանափակումները



□ Գիտակցի Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայիս տարածքի բնառեսուրսային, հոգևոր – մշակութային արժեքը

□ Իմանա երկրի էկոլոգիական խնդիրները, կարողանա առաջարկել լուծումներ, մասնակցի բնապահպանական միջոցառումներին

□ Գիտակցի ՀՀ և ԼՂՀ բնական ներուժը, զարգացման հեռանկարները

□ Հասկանա ռեսուրսների սահմանափակությունը, և գիտակցի դրա խնայողաբար օգտագործման և պահպանման կարևորությունը

9-րդ դասարանում թեմաների յուրացմանը ավելի շատ կնպաստեն ուսումնական ճամփորդությունները.

- ✓ ՀՀ մարզեր և խոշոր քաղաքներ
- ✓ Լեռների, բարձունքների հաղթահարում
- ✓ Գետեր, լճեր, ջրամբարներ
- ✓ Արդյունաբերական ձեռնարկություններ
- ✓ Հանքարդյունաբերական ձեռնարկություններ
- ✓ ՋրէԿ-ներ, ՋԷԿ-եր

«Ա» մակարդակ

Իմանա Հայաստանի և Հայկական լեռնաշխարհի տեղը քարտեզի վրա, մեծությունը, սահմանները: Կարողանա քարտեզի վրա ցույց տալ լեռնագրական գլխավոր միավոր: Իմանա ընդերքի հիմնական հարստությունները, կլիման ձևավորող գործոնները, ջրագրական օբյեկտները, հողային տիպերը: Կարողանա քարտեզի վրա ցույց տալ Հայկական լեռնաշխարհի և Հայաստանի Հանրապետության գլխավոր միավորները, գետերը, լճերը: Կարողանա քարտեզի վրա ցույց տալ մարզերը, մարզկենտրոններով:

Իմանա ՀՀ բնակչության թվաքանակը, թվի փոփոխության դինամիկան, ուրբանիզացման մակարդակը, գլխավոր քաղաքները: Կարողանա քարտեզի վրա ցույց տալ հայաշատ պետությունները, խոշոր քաղաքները:

Իմանա ՀՀ տնտեսության, արդյունաբերության ճյուղային կառուցվածքը, կարողանա պատկերել մեդիադիագրամի տեսքով, ագրոարդյունաբերական համալիրի կազմը, գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքը, հողային ֆոնդը, հողաբարելավման տեսակները: Կարողանա քարտեզի վրա ցույց տալ գլխավոր էլեկտրակայանները, լեռնահանքային, մետալուրգիական, քիմիական շինանյութի արդյունաբերության գլխավոր կենտրոնները, թվարկել ու ցույց տալ խոշոր ջրամբարներն ու ջրանցքները: Իմանա տրանսպորտի հիմնական տեսակները, ուղիները, սպասարկման ոլորտի ճյուղերը: ՀՀ արտաքին կապերը:

«Բ» մակարդակ

Իմանա ՀՀ տարածքի ձևավորման երկրաբանական առանձնահատկությունները, կլիմայի բնորոշ գծերը, եղանակի դրսևորումները, ջրաբանական առանձնահատկությունները, ջրային ռեսուրսների բաշխվածությունը: Իմանա հողային ծածկի, բուսական կենդանական աշխարհի հիմնական առանձնահատկությունները: Կարողանա ՀՀ քարտեզի վրա ցույց տալ

օգտակար հանածոների տեսակները, գլխավոր հանքավայրերը, գետերը, լճերը, ջրամբարները, հողային տիպերը, բույսերն ու կենդանիները:

Իմանա ՀՀ վարչատարածքային կառուցվածքը, պետական կառավարման և ինքնակաավարման մարմինները: Իմանա բնակչության ազգային կազմի փոփոխությունները, արտագաղթի և ներգաղթի հիմնական ցուցանիշները, հայկական սփյուռքի ձևավորման պատճառները, ՀՀ բնակչության կազմը, աշխատանքային ռեսուրսները, դրանց որակական ցուցանիշները, միգրացիայի հիմնական ուղղությունները տարաբնակեցման առանձնահատկությունները: Կրողանա բնութագրել Երևանի աշխարհագրական դիրքը: Իմանա ՀՀ և ԼՂՀ տնտեսության ընդհանուր բնութագիրը, տնտեսության զարգացման բնական նախադրյալները, արդյունաբերության մասնագիտացման ճյուղերը, վառելիքաէներտիկայի առանձնահատկությունները, արդյունաբերության առաջատար ճյուղերի զարգացման բնական և տնտեսական նախադրյալները, գյուղատնտեսական հողահանդակների կազմը, հողաբարելավման, ռոտզման համակարգի առանձնահատկությունները, բուսաբուծության և անասնապահության առանձնահատկությունները, տեղը գյուղատնտեսության արտադրության ծավալում:

Իմանա տրանսպորտային ցանցի տեղաբաշխումը, արտաքին տեսական կապերի յուրահատկությունները, արտաքին և ներքին փոխադրումներ, տուրիզմի զարգացման նախադրյալներն ու հեռանկարները:

«Գ» մակարդակ

Իմանա ջերմության և խոնավության բաշխման օրինաչափություններ, ջրային հաշվեկշիռը: Կարողանա օերնութաբանական կայանի տվյալների հիման վրա ստեղծել ջերմաստիճանի օրական և տարեկան էլեկտրոնային կորերը:

Իմանա Հայաստանի առաջին հանրապետության պետական տարածքի և սահմանների ձևավորումը, բոլոր միջազգային և ռեգիոնալ կառույցները, որոնց անդամակցում է ՀՀ, կարողանա բացատրել ՀՀ և ԼՂՀ հիմնախնդիրը:

Իմանա տնտեսապես ակտիվ բնակչությունը ըստ տարբեր ցուցանիշների, բնակչության զբաղվածության հիմնախնդրի էությունը, իր բնակավայրի աշխարհագրական առանձնահատկությունները: Կարողանա վիճակագրական տվյալների հիման վրա կազմել բնակչության շարժնթացի էլեկտրենային գրաֆիկ:

Իմանա ՀՀ և ԼՂՀ տնտեսության առանձնահատկությունները պատմական տարբեր ժամանակաշրջաններում, տնտեսական քաղաքական նախադրյալները, արդյունաբերության տեղաբաշխման առանձնահատկությունները:

Կարողանա կազմել տնտեսության տարբեր ճյուղերին վերաբերվող մեդիադիագրամներ, կատարել տնտեսական հաշվարկներ հումքի, էներգակիրների սպառման վերաբերյալ: Գրաֆիկորեն պատկերել տնտեսության և նրա տարբեր ճյուղեր կառուցվածքը:

Դասընթացի թեմատիկ պլանավորումը

1. Հայկական լեռնաշխարհի սահմանները, բնությունը, երկրաբանական կառուցվածքը, ռելիեֆը
2. Կլիման: Ջրագրական ցանցը: Գործնական աշխատանք
3. Լադշաֆտային գոտիները
4. Հայկական լեռնաշխարհըհայերի բնօրրան, հայկական սփյուռք
5. ՀՀ սահմանները, տարածքը աշխարհագրական դիրքը, վարչատարածքային բաժանումը
6. ՀՀ երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոները
7. Ռելիեֆը և լեռնագրական մարզերը
8. Թեմատիկ գրավոր աշխատանք
9. Կլիման, տիպերը
10. Ներքին ջրերը, գետային ցանցի առանձնահատկությունները, գլխավոր գետերը
11. Լճերը և ջրամբարները
12. Հողաբուսական ծածկը, կենդանական աշխարհը
13. Լանդշաֆտային վերընթաց գոտիները: Գործնական աշխատանք
14. «ՀՀ բնությունը» թեմատիկ գրավոր աշխատանք
15. ՀՀ բնակչությունը, թվաքանակը, բնական և մեխանիկական շարժը
16. Բնակչության կազմը, աշխատանքային ռեսուրսներ
17. Բնակչության տեղաբաշխումը, տարաբաղեցումը, ՀՀ խոշոր քաղաքները
18. Երևան: Գործնական աշխատանք
19. Կիսամյակի ամփոփիչ աշխատանք
20. Տնտեսության ընդհանուր բնութագիրը
21. Արդյունաբերության ճյուղային կառուցվածքը
22. Վառելիքաէներգետիկա և մետալուրգիա
23. Մեքենաշինություն և քիմիական արդյունաբերություն
24. Սննդի արդյունաբերություն
25. Գյուղատնտեսության ընդհանուր բնութագիրը: Հողային ֆոնդ
26. Բուսաբուծություն
27. Անասնապահություն: Գործնական աշխատանք
28. Թեմատիկ գրավոր աշխատանք
29. Տրանսպորտ: Տրանսպորտի գլխավոր ճյուղերը
30. Տնտեսության ոչ նյութական ոլորտ: Զբոսաշրջություն
31. ՀՀ բնապահպանական հիմնախնդիրները
32. ՀՀ մարզերը գործնական աշխատանք
33. ՀՀ արտաքին տնտեսական կապերը
34. ԼՂՀ բնությունը, սահմանները
35. Բնակչությունը, տնտեսությունը
36. Տարեկան ամփոփիչ աշխատանք